

1944

235

4-77


Lithium

1892.

2010

№ 135

4-33



ՀՐԵՇՏԱԿԻ

ՄՏԱԾՈՒԹԻՒՆՔ

Ս. ԱԼՈՅԻՉՈՅ ԳՈԽԵԱԿԱՅ



ՆՈՒԷՐ ՄԱՆԿԱՆՑ

1892

Ի ՎԵՆԵՏԻԿ = Ս. ՂԱԶԱՐ

ՀՐԵՏԱԿԱՓ

Խ

2001



020

235
Գ-77

ՀՐԵՇԱԿԻՔ

Ա

ՄՏԱԾՈՒԹԻՒՆՔ

Ս. ԱՎՈՅԻԶՈՅ ԳՈԽԱԿԱՑ



ՆՈՒԷՐ ՄԱՆԿԱՆՑ

Ի ՏՕՆԱՆԱՄԲՈՒԹԵԱՆ

ԵՐՐՈՐԴ ՀԱՐԻԿՐԱՄԵԿԻ ՓՈԽՄԱՆ

Ս. ՀԵՂԻՆԱԿԻՆ

1892

Ի ՎԵՆԵՏԻԿ=Ս. ՂԱԶԱՐ



26026-61

Կ2425-42.



ՅԻՇԱՏԱԿ ՀԱՆԳՍԵԱՆ

ԵՐԿՈՒՈՐԵԱԿ Եղբարց ՔՈՎԼԱՆԵՐԵԱՆց


ԾԱԽԼՈց ի 28 Յամ . 1841

Հ. ՍԵՐՈՎԲԵԻ^կ + 1867, յուլիս 6
(ԳՐԻԳՈՐԻԱՆ)

Հ. ՔԵՐՈՎԲԵԻ^կ + 1891, յուլիս 17
(ՔԱՆԻՔԻ)

ՄԻՒԹԱՐԵԱՆ ՄԻԱՆՁԱՆՑ

Ա. ՂԱԶԱՐՈՒԻ



ԲԱՐԵԿ

ՍԻՐԵԼԻ ՄԱՆԿՈՒՆՔ



Առաջին բարեկ
զոր տուի ծեզ,
մինչ ես ալ դեռ ծեր
հասակէմ շատ չէի
հեռացեր, Ս. ԱԼՈՅԻ
ԶՈՅ վարքը պատմե-
լով, այն առաւօտեան
բարի լոյս մ'էր. Բի-
մայ Ամոր մեծագոյն



տութախմբութեամ յիշատակաւ այս բարեւմ՝ բարի երիկում է։ Այս առաւօսութ և այս երեկոյիս միջոց՝ յորելեամ մի ժամանակի անցեր է, 50 տարեկամ օր մի։ Ի՞նչ երկար և կարծ օր։ Ո՞րչափ փոփոխութիւնք, ո՞րչափ դիպուածք։ Ի՞նչ և ի՞նչ յիշատակամեր այս երկու ժամերու մէջ։ Բովածդակ աշխարհազնդիս կէսմ գլորեցաւ, վար ըմկաւ։ Քանի մի՞նչ՝ որ ինձմէ շատ ետքը պիտի անցմէին անոր սահութ երեսէմ, ըստ կարգի բառութեամ, ի՞նձմէ առաջ և շատ առաջ անցամ գմացին. ի՞նչե՞ր ելամ, ի՞նչե՞ր մտամ անցմողին և մտացողին սրտից մէջ . . .

Թողութք Աստուծոյ գիմաց՝ որ միայն գիտէ և սահմանէ ամենութ ժամանակն ու հասակը, կեամքն ու մահը, սէրն ու սուզը։ Փատուենք և ոչ քթենք իր գակտնիքը. օրնինքի իր կամքը. պազենք ծեռքը, եթէ ամուշ տայ մեզ և եթէ փուշ։ Լսենք մեր խղմի մտաց մէջ իր ծայնը. յօժարութեամը կատարենք իր պատուէրը. և միայն զայն կատարենք. և եթէ տկար եմք, ի՞նչէն որ իրաւ եմք, իմդրենք օգնակամ իր մեզ կարգած դարապամ չրեշտակը, որ մօտ և արթութ կեմայ մեր վրայ. ի՞նքն

միշտ արթութ և զուարթութ է, թող զմենց արթութ և զգոյշ պարէ ամէն չարէ, ամէն վմասէ, որոց զիխաւորն մեղքն է։

Այս չըեշտակաց յարմար է մոր ըսելիքըս և յիշելիքս ծեզ, ով ալոյիզասէր Մամկութք. մամաւանդ Ասոր յիշատակն և ընծայն է՝ զոր ես իբրեւ սոսկ թարգմանը կը մերկայացընեմ ծեզ. այս Գրքուկըս։ Իր սքամչելի վարքը ամէն կարգացող կամ լողով վկայեր է և կը վկայէ և կ'ամուանի զինա՝ Հեթ-ի-այն Մանա-ի, Հեթ-ի-այն է այս հեթէն հեթւուն-ի, և այլ բայց թերեւս ամէնքն չեն զիտեր՝ որ այդ հողեղէն հրեշտակն հոգեղէն ըլլալու համար, յիտ Աստուծոյ և Աստուածամօք յատուկ սիրով մի սիրեր է զէրիշտակն և իր մամք մութը գրուածոց մէջ զիխաւոր թողած է զայս Մանա-ի-այն Հեթ-ի-այն գըշոց, իր ըթկերաց աղացանօք գրած։ Կարծէք թէ ինքն առանց իմանալու՝ ծածուկ և զարմանալի վկայութիւն մի տըւած է ասով, (եթէ ներկիլ է ըսելս), թէ բազմութեամ չըեշտակաց ստեղծուած ատեն ինքն ալ ստեղծուելու էր, բայց իբրեւ աստուածային կրակի կայծ մի թըւած հազարաւոր տարիմեր ծածկուած

մ՛ացեր է՝ ուր որ Աստուած զիտէ, և
վերջապէս յայտնուեր է ի մարմնը (յ' 9
մարտի, 1568), որպէս թէ յարգամդէ
սրբեալ. և Յոյժ սրբութեամբ ալ կարճ
կեանք մի ապրելով, թռեր է երկրէս և ե-
լեր իստուեր իր սիրելի և սիրող հրեղէն
չընեցակաց մէջ (21 յունիսի, 1591):

Թէպէտ այս երջանիկ օրէնք միմէնւ այս
օր՝ երեք ամգամ հարիւրեակ տարիներ
անցեր եմ, բայց այս առաջին ամգամն է
որ մեծանամդէս դարագարծ յոբելեան
տօնախմբութիւն ըրին իրեն (1891) բոլոր
հաւատացեալք արեւմտեան եկեղեցոյ, ո-
րոյ մէջ ծնաւ և ապրեցաւ. սակայն իբրև
աղաւաթեւ հովանոնութեամն մա-
տին ծնսի, ազգի և հասակի (և մասմաւո-
րապէս մասնամց) պաշտելի է, և իբրև
երկրորդ և ըմտամի պահապան հրեշ-
տակ: Իր սիրողիք և պատուողք՝ ըստ ի-
րեմց կարողութեան կը ջաման այսօր ի-
րեն ըթայարեր ըլլալ. և ով որ ուրիշ բան
չունի, ամէն բանէ մնձը կը բայց ըթայել.
Սիրտը: — Անշուշտ դուք ալ, սրբամէք
չքաւորք, այսպէս կ'ընէք. և ահա ծեղի
աւելի յօժարութեամբ ընելու նամար,
յորդորակ ըլլայ տոյնիսկ Սլոյիզոյ

սրտաբուղիս մարգարտաշար Մտածութիւ-
նը. որ և կը բեր յստակ հայելի մի կը ցու-
ցնէ ծեզ իր յստակագոյն սիրտը, յորում
կը տիսմէր զլստուած է: Երամբիթէ հիմայ
զծեզալտեսնէր իր մշտագուաթ ժպիտով:

Հիմայ ուրիշ ըսելիք մ՛ունիմ, սիրելի
Մանկումք, ծեզ և ծեզ նմանուաց պարզ
սրտով: Այս առաւօտը, այսինքն 50 տա-
րի առաջ (1841) որ իրարու ծամօթացանք,
անձանօթ հետու երկրի մի (Դպիմ) և ըն-
տամիեաց (Քուշմերեամ) մէջ, մի և Յոյժ
ժամ ըմծայուեր են ի լոյս երկուորեակ եղ-
րարք. որք՝ ըստ բաղդիք՝ յետ 20 տարոյ
(1861), քանի մի տարի անարժանիս ար-
ժամաւոր աշակերտք կամ սահականք ե-
ղամ: Ալոյիզոյ հասակին մէջ մէկ տեղ ի-
րեմք զիրեմք Աստուածոյ Յուիրեցիմ, (ար-
դէմ ի ծեմրդիմէ ալ Յուիրած ըլլալով ի ծը-
նողաց), կրօնաւորակամ ուխտով. քիչ
տարի հտեւ մէկտեղ քահանայական կարգ
առիմ. և իրեմց զուգածիմ եղբայրութեան
համեմատ՝ կոչուեցան զոյք հրեշտակա-
յին ամուամք, Հ. Սերուէն և Հ. Քերուէն,
և իրեմց հոգեղէն պահապանաց սիրով և
շնորհօք՝ կատարէին մարդուս երկրի վը-

բայ տրուած ամենէն մեծ ամենէն սուրբ
այլ և ամենէն ահաւոր և զգուշացի գոր-
ծը. զատարազը: — Քիչ ատեմ վերջը՝
դարձեալ մէկտեղ, նրամամաւ զամքի մե-
ծաւորաց, դարձան իրենց հայրենիքը,
քահամայական պաշտօն վարելու. բայց
ալ ոչ երկար ատեմ մէկտեղ: Վասն զի
քիչ ատեմ վերջը, աստուածային վերա-
կոչմանը՝ առաջածինն է. Սերովքի ծա-
ղիկ հասակի մէջ վախճանեցաւ (1867),
ուրեշտակային շնորհուովն և երկիւղածու-
թեամբ, որով փայլէր իր ընկերաց մէջ:

Հարազատն է. քերովքի մինակ մնա-
ցեալ իր ամենասիրելի և ամենամօտ ա-
րիւակցէն, երկար (27) տարիներ քահա-
մայական և ժողովրդապիտական պաշ-
տօն վարեց զրիմու այլ եւայլ քաղաքներ,
և առաւել ի թէոդոսիա (Կաֆա), թէ նամ-
ազգեաց և թէ օտարազգեաց սիրելի և
պիտանի ըլլալով. (մանաւանդ հոչակաւոր
Արեւելեան պատերազմաց ատեմ, 1876),
ոչ միայն ժրութեամբ և գիտութեամբ,
այլ և յատուկ պարզութեամբ, և զուար-
թութեամբ, որ մարդկանց վրայ հազուա-
գիւտ հրեշտակային նշոյլք եմ: Եւ ահա
այս օրերս՝ որ Ս. Ալոյիզոյ տօնք կը

կատարուէին (1891), իր տեղէն ելած՝ թէ
մական եպիսպոկոսին հեռաւոր քաղաքը
երթալու ատեմ, յանկարծ աստուածակոչ
հրամամաւ մամբան գէպի յերկինս փո-
խուեր է: Կը հաւատամ՝ որ մարմնէն նոր
բաժնուած նոգին՝ չըեշտակաց հետ՝ ընդ
առաջ գտել է իր կամուխ հասած եղօրը
լուսաւորեալ հոգին. որում եթէ աթոռա-
կից և գրկակից ըլլալու համար՝ մամրա-
քմին արդարութիւնն Աստուծոյ կ'ուզէ որ
գեռ աւելի մաքրափայլ ելէ յերկաւոր
խորամը, ազօթինը որ շուտով ըլլայ այն
մեծ ուրախութիւնն յերկինս, և միխթա-
րութիւն յերկրի՝ իրեն ծածօթիցն և սիրո-
ղաց, որպէս և ծեղ իսկ:

Ահա այս՝ թիրեւս յաշխարհի մէկ հա-
տիկ կրօնաւոր և քահամայ նրկուորեակ
նորաց յիշատակին՝ կը նուիրեմ ծեղ
ինչ որ սրբազն յիշատակաւմ Ալոյիզոյ՝
մասի իրեն նուիրեցի. այս իր մեզի թողած
նուէրը (Գրքոյկա), իբրև զքոյս և քյոյց
ընդունէ ըսելով. ծեղ ալ՝ բարեսէր Մաթ-
կումք, իբրև կենաց երեկոյի բարեւ մի:

Հ. Դ. Ա.



ՄՏԱԾՈՒԹԻՒՆՔ
ՀՐԵՇՏԱԿԱՅՅ ՎՐԱՅՈՔ

ՄԱՍՆ Ա.
ՀՐԵՇՏԱԿԻ Ա.Ո. ՀԱՍ Ա.Ր ԱԿ

Ա.

ՏԱԾԵ, թէ ինչպէս Տէրն
մեր Քրիստոս՝ զմեղ իր ըս-
տեղծուածները մեծապէս
սիրելով, չի դադրիր մեզի
նորանոր առիթներ տա-
լու, որովք կարենամբ ըս-
տանալ իր շնորհքը, և ա-
ճել առաքինութեամբը ·
որպէս զի յետ ամենայնի
կարենամբ հասնիլ իր մեզի
պատրաստած վախճանին,
որ է յաւիտենական երա-
նութիւն։ Այս բանիս հա-

մար կամեցաւ՝ որ իր Եկեղեցւոյ մէջ
կատարուեն ամենայն խորհուրդք փըր-
կադործութեան մէրոյ . որպէս զի ա-
տեն ատեն նորոգուելով մէր մտաց
մէջ անոր մէր սիրոյն համար ըրածնե-
րուն և կրածներուն յիշատակն , յոր-
դորուիմք ջանամբ սիրել զինքը և ծա-
ռայել , այլ և մէր ամեն գործը յար-
մարցնել կամ նմանցընել իր մէզի թո-
ղած ամենասուրբ կենաց օրինակին :

Ասկեց զատ կամեցաւ որ յատկապէս
իր ամենասուրբ և ամենօրհնեալ Սօր ,
և ամեն կարգի Սրբոց քանի մի աւելի
նշանաւորաց՝ յատկագոյն յիշատակք
կատարուեն . որպէս զի ըլլան իբրեւ
պաշտպանք մէր , և իրենց մաղթանօք
օգնեն մէզի՝ մէր հոգեւոր և ժամանա-
կաւոր կարօտութեանց մէջ , և նա եւ
պատճառ ըլլան մէզի նմանելու իրենց
առաքինութեանց և սրբակրօն վարուց
օրինակին :

Դարձեալ , որովհետեւ Եկեղեցին և
մէնք ամենքս մինորդութեամբ Հորէ-
տակաց կ'ընդունիմք իր մեծվայելչու-

թեան այնչափ և շարունակ բարիքնե-
րը , կամեցաւ որ ասոնց յիշատակն ալ
աւելի հանդիսով կատարուի : Եւ ի-
րաւ կը վայլը որ մարգիկ ցուցընեն-
անոնց քիչ շատ երախտագիտութիւն ,
որովհետեւ անոնք այնչափ կը փափա-
գին և կը ձարեն մէր փրկութիւնը :
Ասոր համար Սուրբ Եկեղեցին կը տո-
նէ փառաւորեալ Մէքայէլ Հրեշտա-
կապետի յիշատակը , որ իր մասնաւոր
պաշտպաննէ , և ուրիշ ամեն երկնաւոր
գասակարգի Հրեշտակաց և Հրեշտա-
կապետաց . վասն զի ամենքն ալ , ինչպէս
կ'ըսէ Առաքեալն (Պօղոս) , պաշտոնեայք
են և մէկ մէկ կերպով կը ջանան օգնել
Ընտրելոց փրկութեան : Զեն քաշուիր
այն երանեալ հոգինելին՝ խոնարհելու
իրենցմէտ այնքան ցած մարգուն ծա-
ռայելու . վասն զի կը տեսնեն որ ինքն
Մէծն Աստուած , որուն իրենք այն-
քան փափանօք և երջանկութեամբ
կը ծառայեն , խոնարհեցաւ և առաւ
մարգուս կերպարանքը՝ զմարդս փրկե-
լու համար : Զեն քաշուիր նաեւ իրենց



ընկեր ընելու զմարդ, և մեզի պէս
խեղձ որդերով և անարդ հողով ու
փոշով շնելու երկնային Յըռուսավէ-
մի պատերը, և նորոգելու անոնց աւե-
րակները. վասն զի երենցմէ վեր կը
պատուեն և կը պաշտեն զՄարդն աս-
տուածացեալ:

Եւ տես, թէ Բնչպէս յարմարու-
թեամբ Եկեղեցին ի տօնի այս Ա. Ըրեշ-
տակապետիս կը կարդայ այն Խոնար-
հութեան առաքինութեան Աւետարա-
նը (տես յերես 74). վասն զի Բնչպէս
հպարտ Արուսեակն՝ աստուածային
պատիւը յափշտակելու համար, ար-
քայութեան ամենէն բարձր աթոռէն
կործանեցաւ ի խորս գժոխոց, այս-
պէս խոնարհն Միքայէլ և բոլոր եր-
բարի Հրեշտակաց գունդն՝ հպատակի-
լով իրենց Սաեղծողին, և անոր փառքը
սիրելով, և դէմ կենալով այն հպարտ
օձին, այնքան բարձրացան և պատուե-
ցան Աստուծմէ: Նոյն աւետարանն
սահմանուած է ուրիշ Հրեշտակաց տօ-
նին ալ, որք Միքայէլի հետ խոնար-

հութեան առաքինութեամբ ստացան
փառաց պսակը. որպէս զի իմանան
մարդիկ' թէ Աստուծոյ անսխալ և յա-
ւիտենական վՃ՛ռն է, որ ոչ ոք կարե-
նայ Հրեշտակաց ունեցած փառքին հաս-
նիլ, եթէ ոչ խոնարհութեան ճամբով,
ուրնախ ամոնք գնացին: Նա մանաւանդ
Փրկիչն մեր Քրիստոս այս առաքինու-
թեամբ ստացաւ իր սրբազն մարմոցն
փառքը, ինչպէս որ Կըսէ Առաքեալն.
«Խոնարհեցաց զանձն, հնալանդ լեալ
մահուչափ. վասն որոյ և Աստուած
բարձրացոյց զնա» (Փիլիպպ. Բ, 8).
(Վասն զի խոնարհեցուց նորմիքը, և
մինչեւ ի մահ հնալանդեցաւ, անոր
համար Աստուած ալ բարձրացուց և
փառաւորեց զնա): Ուրեմն շատ այ-
լանդակ բան պիտի ըլլար՝ եթէ ան-
դամբն որ են իր հաւատացեալքն, ու-
զէն ուրիշ գըսնէ մը մանել (յաբքա-
թիւն), քան այն գըսնէն ուսկից մտաւ
իրենց Գլուխն (Քրիստոս):

Մասձէ հիմայ այդ երկնային արքունի պաշտօնէից, այդ արքայութեան իշխանաց, գերազանցութիւնը զոր թէպէտ եւ մեր միաքն չի կըրնար բոլորվին հասկընալ և ըմբռնել, սակայն այն քիչ մի լուսով՝ որ իրենց միջնորդութեամբ հալըրդուած է մեզի, մեր այս երկրիս վրայ ծանօթութեամբ, ջանամք ի պատիւ անոնց՝ ժողվել դոնչ մաս մի այն արքանապատութեան և փառաց՝ զրո Աստուած տուեր է իրենց: Խշանի մի ալքունիքը կամ բանակը երեւելի ընող՝ իրեք բան կայ. նախ, անձանց նորութիւնն, երկրորդ, անոնց բազմութիւնն, երրորդ, անոնց գասարգն: Այս երեքն ալ յատկապէս կրփայլն այն հրեշտակային հոգւոց վրայ. վան զի եթէ նկատենք նախ երենց բնութիւնը, մեծ ճարտարապետին Աստուծոյ ձեռաց ամենէն ազնիւթին Աստուծոյ ձեռաց ամենէն ազնիւթին հոգեզն էակ են, շնորւած գործն են. հոգեզն էակ են, որ բնութեամբ անապական է և գերա-

գոյն քան զամենայն ստեղծուածու. այնպիսի միտք ունին՝ որով չեն կըրնար բնական բաներու վրայ մոլորութիւն կամ տգիտութիւն ունենալ, և որչափ որ մտօք պայծառ լցու ունին. այնչափ աւաելի հաստատ և կատարեալ կամք ունին, որ ամենեւն չայլայլիր կամ մթընար կիրքով: Իսկ եթէ նկատելու ըլլաս անոնց հիմայ (Աստուծոյ) շնորհ քով ունեցած վիճակը, առանց ամենեւնին մեզք մըրած ըլլալու՝ սաայեր են փառք և յաւիտենական երանութիւն: Ասկէ զատ, իրենց գոյութեան մէջ հագած են աստուածային շնորհաց զգեստը, որով առաջի Աստուծոյ կերեւան շնորհալիք և գեղեցիկը: Իրենց մտաց տրուած է փառաց պայծառ լցու, որով կը տեսնեն երես առ երես իրենց Արարիչը. իսկ ի կամն՝ զարդարուած սիրոյ զգեստով՝ սիրելով Աստուածութեան սիրով, նոյն ինքն Աստուծոյ որդիկը և բարեկամբ կ'ըլլան:

Նկատէ հիմայ, հոգի իմ, այդ երկ-

նաւոր քաղաքացեաց գեղեցկութիւնը,
 որք նման առաւօտեան աստեղաց և ա-
 մենապայծառ արեւակաց՝ կը փայլէն
 ի քաղաքին Արտուծոյ. և իբրեւ ամե-
 նամաքուր հայելիք իրէնց վրայ կը ցոլա-
 ցընէն աստուածային կատարելութիւն-
 ները, անբաւ զօրութիւնը, յաւիտենա-
 կան իմաստութիւնը, անձառելի բարու-
 թիւնը և Արարշին ամենավառ սէրը:
 Ո՛չ, որչափ շնորհալի են, որչափ մա-
 քուր և որչափ սիրելի այս երանեաւ
 հոգեք. որչափ եռանդեամբ փափագողք
 իրէնց տիրոջ փառացը. և որչափ ցան-
 կացողք և հոգացողք մեր փրկուելուն.
 և որչափ ուրեմն արժանաւողք մեզմէ
 յատկապէս սիրուելու: Վասն զի եթէ
 պատիւն, ինչպէս կ'ըսեն փիլսոփիայք,
 յարդութիւն մ'է որ կը վայլէ անո՞՞ որ
 ունի յինքն գերազանցութիւն մի կամ
 առաքինութիւն մի, նոյնպէս և մարդ-
 կանց մէջ ալ թէպէտ և բնութեամբ
 ամենքն ալ հաւասար են իրարու, սա-
 կայն որոնք որ այսպիսի ձիբքերով ա-
 ռաւելութիւն ունին քան զուրիշները,

աւելի կը յարդուին և կը պատուին.
 ըրչափ եւս աւելի կը վայլէ որ մէնք
 այսքան ցած արարածքս՝ համեմատու-
 թեամբ այն երկնային հոգւոց, պա-
 տուենիք և յարգենիք զանոնք. վասն զի ա-
 նոնց ամէն մէկն՝ թէ և այն վերսիշեալ
 ձիբքերով և գերազանցութեամբ փո-
 քրագոյնն ալ ըլլայ, գեռ շատ կը գերա-
 զանցէ քան զամենայն մեծ մարդ: Աս-
 կէ զատ, եթէ սուրբ Նրեշտակը՝ որք
 թէ բնութեամբ և թէ շնորհօք այնպէս
 արժանաւորք են՝ ի վեր քան զամենայն
 ստեղծուածս, կը խոնարհին և կը
 պատուեն զմարդս, որովհետեւ Աս-
 տուած սիրեցինա և պատուեց, յայ-
 նի է որ աւելի կը վայլէ մեզի՝ որ ըն-
 չին որդնուկք եմք, պատուել զանոնք՝
 ամենայն սիրով ջերմեռանդութեան,
 զորոնք Աստուած այնչափ կը պա-
 տուէ և կը բարձրացնէ յերկնա:
 Վասն զի ասոնք են այն սիրելի որդի-
 քըն՝ որ միշտ կը աեսնէն զերեսս Հօր
 (Մասթ. Ժ. 10.), այն ձերմակ և մա-
 քուր շուշաններն, որոց մէջ կ'արածի

(Երգ Երգոց, Բ, 16.) այն ինկաւոր
անուշահոտ լեռներն, որոց վրայ կը
պարտի և կը զուարձանայ փեսայն Երկ-
նաւոր (Երգ, Բ, 17.):

Փ.

Այս Երկնաւոր արքունեայ արժա-
նաւորութենէն և փառաւորութենէն
վերջն նկատէ անոնց թիւը և կարգը:
Թիւն այնչափ շատ է, որ ոչ միայն ա-
ւելի է քան հիմակուան բոլոր ողջ ե-
ղող մարդիկ, այլ նաև քան զամէն ե-
ղած և ըլլալում մարդիկ մինչեւ դաստա-
տանին օրը: Այս Երանելի հոգւոց բազ-
մութիւնն նման է բազմութեան աւա-
զյ ծովու և աստեղայ, որոց համար
ըստ իմաստունն, թէ անհամար էն.
և ինչպէս կը հաստատէ Ս. Գիտնեսիոս
Արքապատացի (Երկն. Փահանայապէտ.
թ.): Հրեշտակաց թիւն աւելի է քան
զամէնայն թիւ Երկրիս նիւթեղէն բա-
ներու. «Հաղարք հաղորաց պաշտեն
զնա, կըսէ մարդարէն (Խանիէլ, Ե), և

թիւրք թիւրուց կան առաջի նորա»: Հա-
զարաւորներ կը ծառայէն Աստուծոյ, և
թիւրաւորներ՝ պատրաստ կը կենան
գիմացը: Այս խօսքով Ս. Գիրք ըստ ու-
վորութեան՝ ստոյգ թիւր անստոյգին
տեղ կը գնեն, և մարդկանց գործածած
ամենէն մեծ թիւր կը գնեն, որպէս զի
խնացուի որ միայն Աստուծած գիտէ
այն թիւր. և այն որ Աստուծոյ թիւ-
րաւոր է՝ մարդկանց համար անթիւ և
անբար է: Ասոր համար կըսէ Գիրքն
Յովեայ (ԻԵ, 3, 3) Միթէ Աստուծոյ բա-
նակն թիւր ունի: Այս թիւր համար ը-
ստ արքունական Մարդարէն ալ (Աղ-
մոս կի, 18.) Կառք Աստուծոյ թիւրա-
պատիկը (ԵՒ), և հաղար(աւոր) ուղիւքը
կամ հանդիսաւորք, որոց մէջ կը բնաւ
կի Տէր իր սուրբ Անոն լեռը: Երդ
ինչպէս գրուած է ի Գիրք Յայտնու-
թեան, կըսէ Աւետարանիչն, թէ աւ-
ստ մեծ բազմութիւն մի Սրբոյ որ
Աստուծոյ առջեւ կենային, ամէն ժո-
ղովուրդէ, ամէն ազգէ և լեզուէ, զորս
ոչ ոք կըրնար համրէլ: Եթէ այս թիւ-

Ընտրելոյ՝ որ գիտեմք թէ մարդկան
 նուազագոյն մասն է, այնչափ շատ է՝
 որ անհամար է, ապա ո՞րչափ մեծ պի-
 տի ըլլայ Նըեշտակաց թիւն՝ որ տասնա-
 պատիկ աւելի են քան զմարդիկ։ Եւ-
 իրաւ կը վայլէր որ երկնաւոր թագա-
 ւորին արքունականքն այնչափ բազմա-
 թիւ ըլլան, վասն զի կ'ըսէ իմաստունն
 (Առաքք, ԺԴ, 28). «Ի բազում զօրս
 » փառք թագաւորի՝ ի նուազել ժողո-
 » վրդոյ՝ բեկումն հզօրաց»։ Թագա-
 ւորին մեծութիւնն և պատիւն՝ ժողո-
 վրդեանը բազմութիւնն է. Հպատա-
 կաց քիչութիւնն ալ անոր ամօթ և ան-
 արդանք է։ Աստուած գերագոյն իշ-
 խան և թագաւորաց թագաւոր ըլլա-
 լով և տէր տերանց, շատ աւելի կը
 վայլէր որ ունենայ մեծ ընտանիք և
 բազմաթիւ արքունիք այն ընդարձակ
 թագաւորութեան մէջ, այն անչափելի
 երկնաւոր պալատին մէջ։ Ո՛չ, հոգի
 իմ, ո՞րչափ միսիթարութիւն և ուրա-
 խութիւն պիտի ըլլայ տեսնել այնպի-
 սի գեղեցիկ արարածոց բազմութիւն

մի, որք այնչափ աղնիւ են ընորհօք, և
 այնչափ երանելիք փառօք։ Ո՛չ, եթէ
 այն երջանիկ բաղդն ունենայիր՝ այն
 երկնաւոր գունդերուն մէջ գանուե-
 լու, ընկեր ըլլալու այնքան իշխանաց
 և որդւոց Աստուծոյ, մանաւանդ թէ
 քու եղբարցդ։ Վասն զի այն գերափայլ
 և սիրալիր հոգիք չեն ամաչեք զմարդեկ
 իրենց եղբայր ունենալու. որովհետեւ
 ինքն իսկ իրենց Տէրն՝ ամօթ չհամարե-
 ցաւ կոչուելու, այլ և ըլլալու իսկա-
 պէս մեզի եղբայր, մարդկային մարմին
 առնըլով։ Ո՛չ, որքան յօժարութեամբ
 գու ալ այն հըեշտակային ձայներուն
 հետ պիտի գովէիր և օրհնէիր քու
 Տէրդ, իրմէ այնքան բարեք ընդունե-
 լուդ համար։

Պ.

Նկատէ հիմոյ այն զարմանալի կար-
 գը, որով աստուածային նախախնա-
 մութիւնն սահմաներ և կարգաւորեր է
 այս փառաւոր հոգիները, թէ իրենց

Արարէին յարաբերմամբ և եթէ իրենց
իրարու մէջ՝ աշխարհիս ուրիշ արարա-
ծոց յարաբերմամբ։ Եւ նախ, եթէ նը-
կատես զանոնք գէպ առ Աստուած, մէ-
ջէրնին զանազանութիւն չկայ. այլ ա-
մենքն ալ հաւասարապէս կը պատուեն
և կը յարգեն զիս, իբրեւ միակ իշխան
և Տէր այն երկնաւոր քաղաքին։ Ապա
թէ նկատես զանոնք գէպ իրար, այն-
քան սուրբ Հրեշտակաց բազմութեան
մէջ չես գտներ շփոթութիւն մի, այլ
գերագոյն կարգ մի, զարմանալի դա-
սաւորութիւն մի, ըստ զանազան կերպ
իմանալու, մէկն քանզմէկն աւելի բար-
ձըր, աւելի արժանաւոր, ինչպէս որ
Աստուած կը յայտնէ անոնց իր աս-
տուածային գաղտնիքը, և կը ծառայե-
ցընէ զանոնք մարդկան օգտին համար։

Աւելի մանր իշնելով, բոլոր այն ե-
րանելի հոգւոց բազմութիւնքն՝ երեք
Նուիրապետութեան կը բաժնուին,
Վերին, Միջին և Ստորին. ամէն մէկ
նուիրապետութիւն ալ երեք դաս կը
բաժնուի, Վերին, Միջին և Ստորին։

Անոնց առաջին դասն են Սերովեէք,
Քերովեէք և Ամոռոք, իրենց անունէն
կը ընաս հասկընալ անոնց կատարած
պաշտօնը, վասն զի յասուեկ է Աստու-
ծոյ իր արարածոց յանձնելու պաշտօն-
ներուն յարմար անուն ալ տալ իրենց։
Նկատէ ուրեմն առաջին կարգը՝ Սե-
րովեէլց, որոնք իբրեւ գաղտնի սենե-
կապանք և աւելի մերձաւորը երկնա-
ւոր թագաւորին, իրենց անունն հա-
մեմատ, լի են և վառեալ սիրով, և հո-
գեւոր կրակ մի գարձած՝ միշտ կը բոր-
բոքին աստուածային սիրով. և իրենց
այս կրակով իրենցմէ վարի Հրեշտակ-
ները կը լուսաւորեն։ Նկատէ յետոյ
Քերովեէները, որք այսպէս կը կոսուին
իրենց լիուլի գիտութեան համար, և
մեծագոյն մտաւոր լուսոյ մը՝ որ ա-
ռաւել է քան իրենցմէ վարի հոգւոց.
վասն զի աւելի պայծառ կերպով կը
տեսնէն զԱստուած և աւելի շատ բան
յԱստուած. որով իբրեւ թէ իսորհը-
գականք են երկնաւոր թագաւորին,
լի գիտութեամբ և իմաստութեամբ,

զոր նմանապէս կը հաղորդեն իրենց ցէ
 վար եղող Հրեշտակայ: — Յետոյ նկատէ
 ուշ զԱթոռս, որոնք իբրեւ ընտանիք և
 ներքին խորհրդապահք Աստուծոյ՝ այս
 վայելուց անուշամբ կոչուած են, իբրեւ
 թագաւորական աթոռ և գահ ըլլալով,
 որոց վրայ կերպով մի կը նստի և կը
 հանդի աստուածային Աւեհափառու-
 թիւնն, զոր և իբրեւ քահանայապետա-
 կան գահ մի կը կրեն և կը տանին ուր
 որ երթան:

Իջիր հիմայ երկրորդ Նուիրապե-
 տութեան, յորում են երեք ուրիշ
 գասպ հրեշտակայ, Տէրութիւնք, Զօ-
 րութիւնք և Պէտութիւնք, որոնք մաս-
 նաւորապէս այս ստորին (աշխարհիս)
 բաները կառավարելու համար կար-
 գուած են: Եւ նախ նկատէ զՏէրու-
 թիւնն, որք կը ներկայացընեն զտէ-
 րութիւնն գերագոյն իշխողն, և իբրեւ
 թագաւորական նախագահք՝ կը հրա-
 մայեն իրենցմէ վարիններուն, և կ'ա-
 ռաջնորդեն անոնց իբրեւ աստուածա-
 յին պաշտօնէից՝ կառավարելու զտիեւ

զերս: Յետոյ նկատէ զԶօրութիւնն, ո-
 րոնք իրենց կարողութեամբ և զօրու-
 թեամբ իբրեւ շուքով մի կը ծածկեն
 զանբաւ կարողութիւն Տիրովն զօրու-
 թեանց կը կատարեն ամեն գժար բան,
 և իր ծառայութեան մէջ ուրիշ արա-
 րածոց վրայ զարմանալի բաներ կ'աղ-
 դեն: Նկատէ երրորդ զՊէտութիւնն,
 որոնք իբրեւ գաստառք՝ գերագոյն և
 աիելքերական Տիրով հեղինակութիւնը
 և կարողութիւնը կը ներկայացընեն,
 և ունին պաշտօն սանձելու զգեկէն
 զօրութիւնն, հեռացընելով յամենայն
 մարդոյ իրենց վնասակար և արգելք ե-
 ղող բաները, որպէս զի կարենան գիւ-
 րաւ համակը իրենց փրկութեան:

Իշխելով վերջապէս յերրորդ և վեր-
 ջին Նուիրապետութիւն, յորում են
 ուրիշ երեք գասպ, Իշխանութիւնք,
 Հրեշտակապետք և Հրեշտակք, նկատէ
 իշխանութեանց մեծագոյն և բարձրա-
 գոյն գասպ, որոնք այսպէս կը կոչուին,
 որովհետեւ այս Նուիրապետութիւնս
 սահմանուած ըլլալով յԱստուծոյ՝ իր

Հրամանները կատարելու արարածոց
 վրայ, այս առաջին գասն կը ներկայա-
 ցընէ այն գերագոյն Խևանը. և իրմէ
 կարգուած է կառավարելու այլեւայլ
 գաւառներ և առանձին թագաւորու-
 թիւններ: Դարձեալ, ասոնք իբրեւ ա-
 ւելի գլխաւորք՝ անմիջապէս Աստուծ-
 մէ պատուերներ ընդունելով՝ կը յանձ-
 նեն ստորակարգեալ Հրեշտակաց, նա
 եւ օգնութիւն տալով զանոնք կատա-
 րելու: Ասոնցմէ եաեւ կու գան երկու
 գասբն Հրեշտակապետաց և Հրեշտա-
 կաց, որք իբենց անուան համեմատ իբ-
 րեւ գեսպանք և պատգամաւորք կը
 զրկուին Աստուծմէ՝ յաշխարհս, այլ-
 եւայլ պատճառաւ, և նա եւ իբրեւ
 պահապանք տեղերու: Այս երկու գա-
 սերու մէջ ուրիշ զանազանութիւն չը-
 կայ, բայց եթէ այս՝ որ Հրեշտակա-
 պետք սահմանուած են մեծագոյն գոր-
 ծոց համար, Հրեշտակք փոքրագոյն:

Ահա այսչափ քիչ բան մի կը նանք
 իմանալ այն Աստուծոյ տան աստուա-
 ծային ճարտարապետութեան և կար-

գաւորութեան վրայոք: Վասն զի եթէ
 մեր մտայ տեսութիւնն կարենար ա-
 ւելի հեռու տեսնել, և աւելի մասնա-
 ւորապէս նկատ ել ամէն մէկ Հրեշ-
 տակի բնութիւնը և պաշտօնը, պիտի
 գտներ՝ որ ինչպէս իրենք առանձին
 պաշտօն և գործ ունին այն Վերին Ե-
 րուսակեմի մէջ, այսպէս ալ մասնաւոր
 կարգով մի՛ շատ և շատ կը գեղեցկա-
 ցնեն այն երկնաւոր Թագաւորին ար-
 քունիքը և երկնելեաց բազմութիւնը:
 Վասն զի ինչպէս կը տեսնենք այս մէր
 նիւթ ական երկները այնքան աստղերով
 զարդարուած, և մոլորակաց թուէն
 զատ զանազան գունտերով և երկնային
 մարմիններով ալ, որոնք այնպէս զար-
 մանալի կարգով կը շարժին, և կ'ազ-
 գեն երկրիս վրայ, նմանապէս և այն
 հոգեղին և աներեւոյթ երկնքն ալ
 աւելի զարմանալի և աստուածային
 կարգով մր՝ ունի այլեւայլ պայծառ
 աստեղաց նման այնքան զանազանու-
 թիւն հրեշտակաց, որոց ձեռքով Տէ-
 րըն տիեզերաց իբրեւ պինքան մոլո-


րակ աստղերէ կը զրկէ մեր երկրին՝ իր
պարգեւաց և հոգեւոր շնորհաց աղւ
դէյութիւնները։

Ուրեմն հիմայ, ո՞վ հոգի իմ, եթէ
Տիկինն Սաբայ լսելով Սողոմոնի իմաս-
տութիւնը և տեսնելով անոր պալա-
տին վայելըութիւնը, և իրեն ծառայող
պաշտօնէից բազմութիւնը, ինչպէս
կ'ըսեն Ո. Գիրք, սաստիկ զարմանալով
այն ամենիմաստուն թագաւորին ինեւ-
քին, գրեթէ ապշած մնաց, և ըստ ի-
րեն, Երանի անոնց՝ որ գիմացդ կը կե-
նան, և Երանի ծառայից՝ որ արժանի
կ'ըլլան երեստ տեսնելու, և լսելու ի-
մաստութիւնդ (Գ Թագ. Փ.)։ ո՛չ, եթէ
դու ալ կարենայիր հասկընալ այն ճշ-
մարփտ Սողոմոնին արքունեաց վայել-
չութիւնը, գերազանցութիւնը և կար-
գաւորութիւնը, որ իր յաւիտենական
իմաստութեամբ և ճարտարութեամբ
այնպէս լաւ կազմեր և կարգաւորեր է,
ո՞քափ աւելի իրաւունք պիտի ունե-
նայիր զարմանալու այն թագուհոյ
հետ, մանաւանդ թէ այն բարի մար-

գարելին հետ՝ այնպիսի գեղեցիկ բնա-
կարանի փափագով և սիրով պիտի մա-
րէիր։ Ի՞նչ միսթարութիւն, ի՞նչ ու-
րախութիւն պիտի ըլլար գեղի, եթէ
այս ներկայ կենաց ընթացքէն վեր-
ջը՝ կարենայիր գու ալ երթալ և այն
երշանիկ հոգիներու հետ պատուել, և
Տիրոջ որուն կը ծառայէն անոնք, և
որու ծառայէն թագաւորել է։

Ո՞վ սուբր և մաքուր Նրեցակը,
ո՞վ դուք ձշմարտապէս երանելիք, որք
անդագար կը կենաք ի ներկայութեան
Աստուծոյ, և մեծաւ ուրախութեամբ
կը տեսնէք այն երկնաւոր Սողոմոնին
Երեսը, որմէ այնքան իմաստութեամբ
լցուած էք, այնքան փառաց արժանի
եղած, և այնքան ձիրքերով զարդա-
րուած։ Դուք լուսապայծառ աստղեր,
որ այդպէս երջանկաբար կը փայլիք
Եթերական երկնից մէջ, կ'աղաւել,
թափեցէք իմ հոգւոյս վրայ ալ ձեր
Երջանիկ հեղմունքը. կեանքս ամբիծ
պահեցէք, յոյս հաստատուն, վարքս

առանց յանցանաց, բոլոր սէրօ՛ առ
 Աստուած՝ և առ ընկերու: Կ' աղաքեմ
 զձեղ, երանելի Հրեշտակը, ձեր օդ-
 նութեամբ՝ իբրեւ թէ ձեռքով՝ հաճե-
 ցէք առաջնորդելու ինձ՝ խոնարհու-
 թեան արքունական ճամբուն մէջ,
 ուր դուք նախ քալեցիք. որպէս զի
 արժանի ըլլամ ես ալ այս կեանքէս
 վերջը՝ ձեզի հետ տեսնել երկնաւոր
 Հօր երանելի երեսը, և ձեզի հետ դա-
 սաւորիլ փոխանակ այն ասաեղաց մէ-
 կուն որք իլենց հպարտութեան հա-
 մար երկընքէն վար ընկան:



ՄԱՍՆ Բ.

ՅԱՏՈՒԿ ՀՐԵՇՏԱԿԻ



Ե.

033 յետ նկատելու հրեշտա-
 կային նուիբապետութիւնե-
 րը, կր վայլէ քննել այն երկ-
 նային գունդերու անյազթ զօ-
 րապետը, Մկայէլ Հրեշտակա-
 պետը, որ իր մեծ եռանդեան և
 հաւատարմութեանը արգեամբք
 Աստուծմէ իշխան կարգուեցաւ
 ամենայն Հրեշտակաց, որք այլեւ-
 այլ պաշտօններով կը զրկուին
 յաշխարհ: Գերերջանիկն Մե-
 քայէլ պատուեցաւ այս անուամբ, որ
 կը նշանակէ Ո՞լ և իբրեւ Աստուած-
 վասն զի երբ այն գուռող Արուսեակն
 գլուխ վերուց, ուզելով Աստուծոյ նը-

մանիլ, այս հզօր Հրեշտակապետս չկա-
 րենալով համբերել իր Տիրոջ այսպիսի
 նախատանաց, սաստիկ եռանդեամբ
 վառուած կանչեց և ըստւ. Ո՞վ է իր-
 դեւ Աստուած. Ո՞վ է իրդեւ Աստուած
 ով է այն յանդուգն կամ այնպիսի զօ-
 րաւորն՝ որ կարենայ նմանիլ Աստու-
 ծոյ: Իբրեւ թէ ըսէր, Զկայ ոչ յեր-
 կինս և ոչ ի բոլոր տիեզերս մէկն նման
 Աստուծոյ: Ո՞վ ամենալօր Միքայէլ,
 արժանի մարդկան ամեն գովութեան
 և պատույ, որովհետեւ այդպէս հա-
 ւատարիմ և նախանձաւոր եղար Աս-
 տուծոյ փառաց:

Այս փառաւոր Հրեշտակապետս՝ ոչ
 միայն յաղթական եկեղեցւոյ մէջ՝ այլ
 նաեւ զինուորեալ եկեղեցւոյ մէջ Աս-
 տուծմէ զանազան յատուկ շնորհըներ
 ընդունեցաւ. փան զի, նախ հին օրի-
 նաց մէջ մինակոկային (Հրէից ժողո-
 վըրդեան) պաշտպան և պահապան դը-
 րուեցաւ, յետոյ Նոր օրինաց մէջ եշ-
 խան և պաշտպան եկեղեցւոյ Աստու-
 ծոյ: Այս է այն քաջ զօրավարն և առաջ-

նորդն, որուն մեծասրտութեան և ե-
 ռանդեան հետեւելով բարի Հրեշտա-
 կաց գունդերն, գէմ կեցան այն թու-
 նաւոր վիշապին յանդգնութեան, ո-
 րուն գլուխով ջախչախելով յաղթեց,
 և անոր բոլոր հետեւողներովը եր-
 կընքէն վար թօթափեց: Դարձեալ,
 ամէն առթի մէջ՝ երբ ալ որ պէտք ե-
 ղաւ օգնել և պատերազմիլ հաւատա-
 ցեալ ժողովրդեան համար, միշտ հօն
 պատրաստ գտնուեցաւ անյաղթելին
 Միքայէլ: Նա պատերազմեցաւ յԵ-
 գիպասոս Աստուծոյ ժողովրդեան հա-
 մար, շատ տեսակ հրաշքներով և նշան-
 ներով աղատելով Փարաւոնի գէրու-
 թենէն: Նա այն հրեշտակն էր՝ որ այն
 սարսափելի գիշերը՝ Աստուծոյ հրամա-
 նաւ զարկաւ բոլոր Եգիպտացւոց ան-
 դրանիկ զաւակները: Նա քառասուն
 տարի զօրավարի և ձամբայ բացողի
 պէս առաջնորդեց Խարոյելացւոց: Կար-
 միր ծովուն մէջ ընկվմեց Փարաւոնի
 բանակը՝ որ անոնց ետեւէն էր ինկեր.
 սպաննեց և ընկեց այնքան մարդիկ ե-

բանակներ՝ որ անոնց կը հակառակէին.
 և վերջապէս ազատելով հասուց այն
 երկիրը՝ զոր Աստուած անոնց խոստա-
 ցեր էր: Նա և յետ մահուան Մովսէսի՝
 երբ խորամանկ սատանայն կը մտածէր
 անոր սուրբ մարմնովը զիսրայէլացիս
 ի կոսպաշտութիւն ձգել, այս զօրա-
 ւոր Հրեշտակապէտս՝ Աստուծոյ պատ-
 ուց նախանձով վառուած և անոնց հոգ-
 ուց փրկութեան, դէմ կեցաւ անոր և
 վարնակց: Նոյն ինքն երբ իսրայէլացիք
 գերի քշուեցան ի Բաբիլոն, և գերու-
 թեան սահմանեալ ժամանակն լըն-
 ցաւ, եկաւ անոնց օգնելու և իրենց ա-
 զատութեան ամեն արգելքները վեր-
 ցընելու: Եւ թէպէտ այս գործոց և
 տեղեաց մէջ ամեն տեղ յայտնի յի-
 շուած չէ Միքայէլի անունն, սակայն
 ինքն Աստուծմէ գրուած ըլլալով պաշտ-
 պան և պահպան այն ժողովը գետան,
 կը մարդ ստոյդ համարիլ որ կամ ին-
 քըն անձամբ մէջ մտաւ, կամ ուրիշ
 Հրեշտակներ Միքայէլի յանձնելովը:
 Դարձեալ բաց յընդհանուր պաշտ-

պանութենէ Ա. Եկեղեցւոյ՝ այս փառա-
 ւոր Հրեշտակապէտս մամնաւոր պաշ-
 տօն մ'ալ ունի. որ է ընդունիլ արդարոց
 հոգիները, որոնք ենելով այս աշխար-
 հէս՝ կ'անցնին ի հանգերձեալ կեանս.
 պաշտպանելու զանոնք թշնամոյն ո-
 րոգայթներէն և հակառակութենէն,
 և հանելու զանոնք յատեան դատաս-
 տանի Քրիստոսի, որպէս զի ընդունին
 այն վարձքը՝ որ ամեն մէկուն արդեանց
 համեմատ Աստուծմէ սահմանուի ա-
 նոնց: Եւ դարձեալ երբ աշխարհիս
 վերջն համնի, նորէն պիտի երեւայ
 այս ամենազօր Հրեշտակապէտս՝ պա-
 տերազմելու համար Նեռին հետ, որ
 սուտումուտ հրաշքներով պիտի ջա-
 նայ մոլորեցընել հաւատացեալները, և
 պաշտպանելու վիշեղեցին Աստուծոյ՝
 այն վարհուրելի հալածանքէն: Եւ յետ
 այս յաղթութիւնը կատարելու, և
 խաւարին իշխանը կապկըպելու դժո-
 խային անդընդոց գըբոյն մէջ, նոյն
 Հրեշտակապէտն պիտի հնչէ այն ահա-
 ւոր փողը, որոյ ձայնէն ամեն մեռեալք

պիտի յառնեն և կենան յաւիտենաւ
կան Դատաւորին առջեւ, լսելու այն
վերջին վՃիռը, որով արդարք յաւի-
տենական փառօք պիտի վարձատրուին,
ընդհակառակին մեղաւորք յաւիտենա-
կան տանջանաց գատապարտին։ Այն
տաեն ալ ժամանակ պիտի չըլլայ ողոր-
մութեան և շնորհայ, այլ անաշառ
արդարութեան, և ամէնքն՝ Աստուծոյ
արդար գատաստանաւ պիտի որոշուին
երթալու այն տեղը՝ որուն ամէն մէկն
այս աշխարհին մէջ արժանի եղաւ։

Ո՛վ անյաղթելի իշխան և հաւատա-
րիմ պահապան Եկեղեցւոյ Աստուծոյ
և հոգւոց հաւատայելոց, որ միշտ
այնչափ սիրով և եռանդեամբ մոտար
այնքան պատերազմներու, և այնչափ
գործոց աշխատեցար, ոչքեզի համբաւ
և համարմունք ստանալու համար, ինչ-
պէս կ'ընեն աշխարհին զօրապետք, այլ
մէծցնելու և պահպանելու համար
այն փառքը՝ զոր ամենքս ալ պարտա-
կան եմք տալ Աստուծոյ։ Նոյնպէս ալ
մարդկանց փրկութեան փափագելով՝

եկու, կ'աղաւէմ, օգնելու իմ հոգւոցս
ալ, որուն հետ միշտ և մեծ վտանգով
կը պատերազմին՝ մարմին, աշխարհ, և
սատանայ, իր թշնամիներն, և լնագէս
որ դու էիր առաջնորդ Խրայելացւոց՝
անապատին մէջ, յանձն առ ըլլալու
նա եւ այս աշխարհիս անապատին մէջ՝
հաւատարիմ ճամբայ ցուցնող, զիս
ապահովապէս հասցընելու այն երջա-
նիկ հայրենիքո՞ւ ուսկից ամենքս ալ
պանդուխտ եմք։ — Ո՛վ հոգի իմ, երբ
գայ այն վերջին ժամին քու (Ճամբոր-
դութեանդ) օրուան, երբ համնիս այն
ահաւոր և վտանգաւոր անցքին, ուր
պիտի ստիպուիս հանել թողուլ քու
այդափի սիրած մարմինդ, և մերկ ու
մինակ անցնիլ այն վշտայ և մահուան
ամենանեղ գոնէն, և զժոխային իշխա-
նութեան այնքան գունդերու մէջն՝
որ քու մահուափի թշնամիքդ են, և ա-
նութի առիւծներու պէս չորս կոմդ-
պիտի ժողվուին մոնչալով, զքեզ յա-
փրշտակելու և կլնելու պատրսս-
տուած։ ո՛չ, եթէ այն վայրենին՝ այս

անցաղթելի Հրեշտակապետն, ինչպէս
 որ միշտ տեսնութեցաւ պատրաստ ամեն
 հաւատացեալ հոգւոց կարօտութեան
 ատեն, ուզենայ իր պատուաւոր գուն
 դովն քեզի աւ օգնութեան դալ և քեզի
 համար պատերազմիլ, և իրեն պաշտ-
 պանութեան ամենամուը վահանով՝
 զքեզ ասպահովապէս անցընելու թշնա-
 մեացդ միջն, քեզի պաշտպան կենալ,
 քեզի համար պատախան տալ, և իր
 ալաշանօք մեղացդ թողութիւն իրն-
 դրել և վերջապէս, զքեզ իր յապթա-
 կան գրօշին ներեւ առնելով՝ առաջ-
 նորդել մոցընել զքեզ այն երջանիկ և
 սուրբ լուսոյ մէջ, ուր ինքն և ամեն
 Հրեշտակը և ընտրեալ որդիք լուսոյ՝
 կը փայլին իրենց Ստեղծողին յաւե-
 տենական ուրախութեամբ և ցնծու-
 թեամբ. — ո՛հ, ինչպէս հանդիսա պի-
 տի ըլլաս այն ատեն, և որչափ միսթե-
 րութեամբ ու գոհութեամբ սրտի պի-
 տի թողուս ենես այս աշխարհէս:

Յետ փառաւորեալ Մկբայել իշխա-
 նին նկատէ Գաբրիելի արժանաւորու-
 թիւնը և գերագոյն յատուկ ձիրքելը.
 որ թէպէտ ի գիրս Հրեշտակ կը կո-
 չուի, սակայն պէտք չէ կարծել թէ
 ըլլայ այն ստորին կարգի եղողներէն,
 որոնք կը զբկուին մարդկան օդնու-
 թեան և ծառայութեան, այլ թէ Հը-
 րեշտակէ աւելի է, այսինքն Հրեշտա-
 կապէտ է, և Հրեշտակապետաց մէջ աւ
 առաջին: Վասն զի ինչպէս այն խոր-
 հուրդն զրո եկաւ աւետելու՝ հաւա-
 րակ գործ կամ խորհուրդ մի չէր, այլ
 Աստուծոյ գործոց մէջ ամենէն գերա-
 գոյնն և ազնիւն, այսպէս ալ հաւա-
 րալու է որ այս աստուածային պատ-
 գամաւորս ամենէն բարձր և արժանա-
 ւոր անձանց մէկն էր՝ այն Նուիրապե-
 տութեան կարգին մէջ: Առ է այն երկ-
 նաւոր փեսային հաւատարիմ բարե-
 կամն, որ իմանալով անկէ իր մարդե-
 րութեան խորին գաղանիքը՝ առաջին

Եղաւ զայն յայտնելու աշխարհի: Սա
է այն շնորհալի փեսաւերն՝ որ միջնորդ
եղաւ Աստուծոյ Բարձրելոյ և Դաշտ-
քեթի խոնարհ Կուսին, յաւիտենական
բանին և մեր մարդկային ընութեան:

Հիմայ այս Հրեշտակապետին արժա-
նապատուութիւնը լաւ իմանալու հա-
մար, Աստուծմէ իրեն յանձնուած
պաշտօնները նկատէ մամնաւորապէս:
Եւ նախ, ինչպէս Սուրբք ոմանք կը
հաստատեն, կը ոնանք հաւատալ՝ որ
ինքն տրուած ըլլայ յատուկ պահա-
պան ամենասուրբ Կուսին. և ինչպէս
որ Աստուծ ոչ յերկինս և ոչ յերկրի
քան զԱ. Կոյսն Մարիամ աւելի սիրելի
և արժանաւոր մէկն ունէր, այսպէս
ալ կը ոնանք մոածել՝ թէ ինչպէս աշ-
խարհիս թագաւորք իրենց ամենէն սի-
րելի բաները՝ իրենց ամենէն պատուա-
կան պաշտօնէից կը յանձնեն, այսպէս
ալ այն երկնաւոր աղքունեաց մէջ փա-
ռաւորեալն Գարբիէլ սկսք էր որ ըլ-
լայ երկնաւոր թագաւորին ամենէն
սիրելիներէն և հաճելիներէն մէկն:

Նկատէ դարձեալ այս երանելի Հրեշ-
տակապետիս մէկ ուրիշ պաշտօնը, այս-
ինքն է Ամենասուրբ Երրորդութե-
նէն պատգամաւոր զրկուիլն այնպիսի
բարձր և կարեւոր գործոյ մի, ինչպիսի
է Մարդեղութիւն միածին Որդւոյն
Աստուծոյ, բոլոր աշխարհիս ազատու-
թեան և փրկութեան համար: Ուրեմն
շատ յարմար է իրեն անունն Գարբի-
էլ, անուն խորհրդաւոր, որ կը թարգ-
մանուի Մարդ - Աստուծ: որովհե-
տեւ ինքն աւետեց աշխարհի զՔրիս-
տոս, որ միանգամայն Աստուծած էր և
պիտի ըլլար մարդ: — Դարձեալ, այս
Գարբիէլ անունս յատկապէս կը նշա-
նակէ Զօրուրին Ասոռծոյ. և այս՝
մասամբ նոյն գործոյն համար՝ զոր ա-
ւետեց աշխարհի, որ էր այն ամուռ
և երեքպատիկ կապն, այն ամենա-
պինդ միաւորութիւնն աստուածա-
յին ընութեան Քրիստոսի՝ մարմնոյ և
ամենասուրբ հոգւոյն հետ՝ ի միում
պարզ ենթակայի և անձին յաւիտե-
նական բանին, ինչպէս որ գրուած է.

«Առասան երեքին՝ ոչ վաղվաղակի խը-
զեսցի» (Ժողով Դիմական պատմութեամբ) - Դարձեալ, զօրու-
թիւն Աստուծոյ կ'ըսուի, որովհետեւ
իր գեսպանութեամբն միջնորդ եղաւ՝
որ արուի մեզի աստուածային զօրու-
թիւն, երբ առնու Աստուած մարդ-
կային բնութեան հետ անոր ակարու-
թիւնն ալ: Ուրեմն մարդիկ այս զօրու-
թեամբ այնպէս սրտոս և ուժով ե-
ղան, որ վերջը մարդկային ամէն ու-
ժէ և զօրութենէ վեր բաներ գործե-
ցին:

Հրեշտակ, իրաւ որ հզօր, որովհե-
տեւ ոչ միայն քու գեսպանութեամբ ա-
ստուածային զօրութիւն բերիր, այլ
նաև կնոյն իսկ զԱստուած բերիր, որ
մարդկանց քան զամէն զօրաւոր զօրա-
ւորագոյն է, որ կողոպահեղով և հալա-
ծելով յաշխարհէ այն հզօր զբահաւո-
րը՝ որ այնքան տարիներ (դարեր) բունա-
ւորի պէս կը տիրէր հօն, ազատեց զմեզ
անոր ծառայութենէն, և նորէն դար-
ձուց մեզի Աստուծոյ որդեգրութեան
պատիւը:

Կը մայ հիմայ որ յետ նկատելու
Միայէլ իշխանին եռանդը և նշանա-
ւոր գործերը, Գաբրիէլ Հրեշտակա-
պետին ալ խորհրդաւոր զօրութիւնը,
մտածել նաև Ուափայէլ հրեշտակին
փութաջան սէրը. որ, ինչպէս ինքն
ըսաւ, ըլլալով մէկն եօթն Հոգիներէն
որոնք միշտ Աստուծոյ առջեւ կը կե-
նան, հաւատալի և որ ըլլայ ալ արքա-
յութեան գլխաւոր Հրեշտակապետ-
ներէն մէկն: Նոյնպէս ալ մոածենք
այնքան շատ բարիքները, զոր ամէն
մարդ թէ իր մարմնոյն համար և թէ
իր հոգւցն՝ կ'ընդունի իր պահապան
հրեշտակէն: Որովհետեւ այս փառա-
ւորեալս Ուափայէլ թէ իր անուանն
համար և թէ իր գթութեան գործոց՝
զօր ըրաւ ծեր Տոփեիթայ և անոր (Տու-
բիա) որդւոյն, եղաւ Ճիշդ օրինակ և
յայտնի պատկեր մի այն ամէն բանի՝
զոր կընեն մէջ Պահապան հրեշտակք:
Եւնախ, շատ յարմար է իրեն Ուափա-

յել անունն, որ կը նշանակէ Դեղ
Աստուծոյ. այն գեղի ներգործութեան
համար՝ զոր յիրաւի ըրաւ թէ հոգեւո-
րապէս պատանի Տուբիային, և թէ
մարմաւորապէս անոր ծերունի հօրը,
նորէն աչաց տեսութիւն տալով:

Եւ միթէ ուրիշ բան է Պահապան
հրեշտակիդ քեզի ըրածը, բայց եթէ
բժշկութիւն, և բժշկութիւն թէ ըստ
հոգւոյ և թէ ըստ մարմոյ, ինչպէս որ
քէզ մի վերջը պիտի ըսեմ: Ուրեմն այս
բանս աղէկ հասկընալու համար՝ մտա-
ծէ որ մարդկան կէնաց վիճակըն երեք
են. մէկն՝ մինչ գեռ մարդ մօրը ծոցում
է. Երկրորդ՝ ծնանելէն մինչեւ ի մահն,
և իր հոգւոյն առանձնական գատաս-
տանը. Երրորդ, իր մահուանէն վերջը
ըլլալիքն: Յօրդ այս երեք վիճակաց մէջ
ալ Իտափայէլ հրեշտակի ամեն ըրած-
ներուն համեմատ՝ մտածէ քու Պահա-
պան հրեշտակիդ քեզի ըրած մասնա-
ւոր պաշտաները: Առաջին վիճակին
նկատմամբ՝ կը պատմե՞ն Ս. Գիրք, որ
Տուբիթ ուզելով իր որդին երկար

Ճամբօրդութեան մի զրկել, ընկեր մի
կուղէր որ հետը խաւրէ. այն ատեն
դեռ իր բարի զաւակն տունէն չելած,
Աստուծած իր Նրեշտակը խաւրեց, որ
մարդու կերպարանքով երեւնալով՝
ինք զինքը պատրաստ ցուցուց ընկեր և
առաջնորդ ըլլալու բոլոր այն պահերին
տութեան մէջ: Ո՛վ անչափ գթու-
թիւն և իննակը Աստուծոյ, աւելի քան
հօր մի. որ քու մօրդ ծոցէն ելնելէդ ա-
ռաջ, յառաջ քան քու գիտնալդ թէ
թշնամիներ և վտանգներ պիտի ունե-
նաս, հրամնեց Աստուծած այն երջանիկ
հոգիներուն մէկուն՝ պք միշտ կը տես-
նեն և կը վայլեն իր աստուծային ե-
րեսը, և յատուկ անոր՝ որ առաջուց
քու մօրդ պահապան եղած էր, որպէս
զի վրադ հոգ ունենայ, այն փափուկ
վիճակիդ սկսած՝ ուր շատ վտանգաց
ենթակայ էիր, պահպանելու անօնցմէ
զքեզ ալ մայրդ ալ. որպէս զի կարե-
նաս առանց արդելքի համնիլ մկրտու-
թեան չնորհաց, և Աստուծոյ որդուց
թիւը գրուկէ: Բայց ինչ կ'ըսեմ թէ

Աստուած յիշեց զքեղ ու խնամք ունեցաւ վրադ՝ երբ գեռ մօրդ ծոցում էիր. գեռ ալ աւելի. ի յաւիտենից՝ յառաջ քան Նրեշտակները ստեղծելը, յառաջ քան որ և է բան ընելը, երբ գեռ ոչ անդունդը կային, երբ գեռ երկնից և երկրի հիմերը չեր դրած, Օստուած յիշեց զքեղ, ով ողորմելի մարդ, և հոգաց քու փրկութիւնդ. Եւ թէպէտ իր աստուածային մաօք առաջուց տեսաւ քու ապերախտութիւնդ և անարժանութիւնդ, ի վերայ այսր ամէնայնի միայն իր բարութեամբն՝ առանդ քու արդիւնք մի ունենալուդ, ոչ միայն սահմանեց քեզի այն օգնութիւնը տալ, այլ նա և այն ամենայն բարիքը՝ զոր ի վայրկենէ քու յզութեանդ ընդուներ ես և պիտի ընդունիս միշեւ այն վերջին մեծ վայրկեանը, ի վեր քան զամեն բարիք, որ է քու յաւիտենական երջանկութիւնդ:

Ը.

Գալով կենացդ երկրորդ վիճակին, երբոր եւար եկար ի լոյս աշխարհիս, Ս. Գիրք դարձեալ կըսեն, թէ ինչպէս որ Իրափայէլ հրեշտակ Տուբիայի հետ հօրը տունէն ելնելու ատեն՝ խոստացաւ տանիլ զայն ողջ առողջ, և բոլոր այն ձամբորդութեան մէջ հաւատարմութեամբ ընկերացաւ, այսպէս երբ որ գու ծնար, Օստուած մէկէն քեզի ընկեր տուաւ այս երկնային քաղաքացիներէն մէկը. որպէս զի իբրեւ քու յասուկ պահապանդ և վարժապէտ զքեղ պաշտպանէ, և ըլլայ յերկինս առ Վէհափառութիւն Օստուծոյ քու բարեխօսդ. վասն զի այս կենացս մէջ ամենքս ալ տղոյ պէս եմք, և կարօտ եմք ինամողի և սովորեցընողին որ մէզի առաջնորդէ, և երբեմն ձեռքերնէս բռնէ և հաստատէ, որ չըլլայ թէ ոտքերնիս մէղքի մի քարի զարնուին. և երբեմն ալ վտանգաւոր անցնելու տեղ մի զմեղ իր գիրկը առնու, որպէս զի

ապահով անցնինք, և անցնելնէս վեր-
ջը տեսնենք վտանգը:

Երկրորդ. ինչպէս հրեշտակն Իւ-
փայէլ առաջնորդելով. Տուբիայ պա-
տանւոյն այն ճամբորդութեանը մէջ,
բարի խրատներ և յիշելիքներ կու տար
իրեն, և որովհետեւ պիտի կարգըւէր
նա՛ մասնաւորապէս յիշեցուց թէ ինչ-
պէս կը վայլէ ակսիլ զամուսնութիւն,
ոչ իրեւ մարմնասէր մարդիկ, հապա
շատ աղօթքով, (Տովք. ԺԲ). այսպէս ալ
քու Պահապան հրեշտակդ՝ անդադար
քեզի բարի խրատներ կու տայ և կ'ազ-
դէ սրտիդ, ամեն գործերդ ուղելով.
վասն զի ինքն է որ կը յորդորէ և կը
դրդէ զքեզլատ բարի գործեր ընելու,
զորոնք առանց իրեն օգնութեան չեիր
կըրնար ընել. և զայս երբեմն յօժա-
րեցընելով զքեզլ Տեառն մերոյ Քրիս-
տոսի և Արքոց օրինակներով, երբեմն
կամքդ վառելով մոտածութեամբ բա-
րութեանն Աստուծոյ և իրեն անչափ
բարերարութեանց. Երբեմն ալ լու-
սաւորելով միտքդ՝ հանդերձեալ դա-

տաստանին և դժոխոց տանջանաց վա-
խովը:

Երրորդ. կը շարունակէ Ո. Գլոբ
պատմելու այն բարիքները զոր ընդու-
նեցաւ Տուբիա Իւփայէլ հրեշտակէն,
թէ իր անձին վրայ և թէ ժամանակա-
ւոր ընչեց. և նախ, երբ Տուբիա Տիտ-
րիս գետայն եղելքը գնաց լուացուելու
համար, վրան մեծ ձուկ մի յարձրկե-
ցաւ զինքը կանելու. բայց Հրեշտակն
պաշտպանեց և ազատեց զնա ի վտան-
գէն. ուզեց ալ որ այն ձկան լեզնն
առնու, որով իր հօրը կուրութեան
բժշկութիւն ըլլայ: Ասկէց զատ, նոյն
Հրեշտակն ոչ միայն ձեռք բերաւ այն
ստակը որոյ համար զրկուած էր Տու-
բիա, այլև ժառանգ ըրաւ զանիկայ բո-
լոր ստացուածոց իր աներոյն, Հոա-
գուելի: — Արդ ի՞նչ կ'ընեն մեր Պահա-
պան հրեշտակքն, եթէ ոչ անդադար
հսկել մեր վրայ, որ հարկաւոր ատեն
օգնեն մեզի, ինչպէս կ'ընէ մայր մի որոյ
աչքն միշտ իր փոքրիկ տղուն վրայ է,
որ ըըլլայ թէ ընկնայ կամ կերպով մէ

Քմասուի: Հիմայ մոտածէ, թէ որքան
մարմնաւոր վասնգներէ ազատ պահեր
է զքեզ, որոց մէջ կը բնայիր ընկնիւ,
ինչպէս շատ ուրիշներն. և որչափ հո-
գով քեզի ժամանակաւոր բարիք ճա-
րեր է. ինչպէս, առողջութիւն, ոյժ և
ուրիշ օգնութիւններ, որպէս զի կարե-
նաս բու վիճակիդ պատշաճ ասլրիլ, և
այն ամէն բան՝ որ քու փրկութեանդ
համար աւելի հարկաւոր կը ճանչնար:

Չորրորդ. ինչպէս հրեշտակն Ուա-
փայէլ, (և այս ինքն ըստաւ), կը հոգար
Աստուծոյ առջեւ հանել Տուբիայի ա-
ղօթքները և բարի գործերը, այսպէս
մեր Պահապան հրեշտակն ալ մեզի
համար գործակալի մի պաշտօն կը կա-
տարէ Աստուծոյ առջեւ, ներկայացը-
նելով անոր քու աղօթքներդ, քու
բաղձանքդ, և այն ըրած քչիկ մի բարի
գործերդ. Աստուծոյ կողմանէ ալ միշտ
քու հոգւոյդ պարզեւ մի, աստու-
ծային չնորհք մի բերելով: Ո՛հ, թէ
կարելի ըլլար տեսնել թէ որչափ
յօժարութեամբ հրեշտակք կ'ենեն և

կ'իջնեն մեր վրայ, ինչպէս այն սանդը-
զին վրայ՝ զոր տեսաւ Յակովը նահապետ
(Մատ. Հ5): Կ'ենեն՝ մեր կարօտու-
թիւնները ներկայացընելու, աղաչելով
զնայլներկնաւոր և ինդրելով որ ողոր-
մի մեզ. կ'իջնեն՝ նոյն Հօրմէն բերելով
մեզ սուրբ ազգմունք, բարի մոտածմունք
և ուրիշ աստուծածային օգնութիւններ.
Երբեմն ալ հայրական յանդիմանու-
թիւններ՝ զմեզ արթընցընելու և զգաս-
տացընելու համար, որպէս զի չըլլայ
թէ այս աշխարհիս հետ դատապար-
տուիմք (Ը, Կողմնթ. ԺԱ):

Հինգերորդ. ինչպէս որ Հրեշտակն
Ուափայէլ սովորեցուց Տուբիայի սա-
տանան հալածելու կերպը, որպէս զի
չափել իր վրայ, և ինքն իսկ Հրեշտակն
ալ կռուեցաւ անոր գէմ՝ պատանին
պաշտապանելու համար (Տովք. Ը, 6),
այսպէս մեր Պահապան հրեշտակն ալ
իրեւ հաւասարիմ զբավար մի որուն
յանձնուած ըլլայ բերդ մը պաշտապա-
նել, արթուն կը կենայ որ չըլլայ թէ
թշնամին ոչ բոնութեամբ ոչ խարեւու-

թեամբ կարենայ յաղթել մեզի : Վասն
զի այս սուրբ Նրեշտակը այն հաւա-
տարիմ պահապանքն են, որոց համար
ըստ Տէրն, թէ դրեր և Երուսաղեմի
պարօպաց վրայ, որ գիշեր ատեն հըս-
կեն և պահպանեն իր հօտը, որպէս զի
ըլլայ թէ գժոխային գայլն՝ թշնամին
մեր՝ յանկարծ առիւծի պէս յափշտակէ
մեր հոգիները :

Այս Պահպան հրեշտակայ կը
պատշաճին Յայտնութեան խօսքն (4,
2), « Լէր արթուն և հաստատեա » .
արթուն կեցիր և հաստատէ. վասն զի
Պահպան հրեշտակն արթուն կը կե-
նայ սատանայի դէմ, անոր յարձակ-
մոնքը արգելլով, անոր հարուածներէն
պաշտպանելով, ուժն ալ կոտրելով որ
շատ չզօրանայ մեր վրայ : Ուրիշ կող-
մէ ալ կը հաստատէ զմեզ, Երբեմն մե-
զաց առիթները հեռացընելով, Երբեմն
ետ կեցնելով զմեզ մոլութիւններէ և
մեղքերէ, որոց մէջ գիւրաւ կ'ընկնէինք
եթէ չօդնէր մեզի . կամ սովորեցնելով
մեզի՝ թէ ինչպէս պէտք է մենք մեզի

օդնեմք փորձութեանց մէջ, Երբեմն ալ
քաջալերելով և սիրտ տալով մեզի՝
երբ փորձութիւնք պատերազմին և
նեղեն զմեզ, և վերջապէս խնդրելով
յԱստուծմէ մեզի ոյժ և չնորհք տալ
համբերութեամբ դէմկէնալու և յաղ-
թելու համար :

Վեցերորդ . ինչպէս գարձեալ Նրեշ-
տակն Ուախայէլ որպէս զի սատանայ
չի սպաննէ զԾուրիս, ինչպէս իր կնոջ
առաջին ամուսինները, բոնեց կապեց
և քեց զնա անապատ տեղ մի . այսպէս
մեր բարի Նրեշտակն ալ մասնաւորա-
պէս մահուան ատեն մեր քով կը կե-
նայ, պաշտպանելու ամեն ատենէ աւե-
լի, և սատանայի հնարքներէն և հա-
կառակութիւններէն աղատելու հա-
մար, որ այն ատեն քան ուրիշ ամէն
ատեն՝ չորս կողմ՝ կը պարագն որ կարե-
նայ մէկը յափշտակէլ (Ս. Պետր. Ե.) .
մասնաւորապէս, չի թողուր որ ընկ-
նինք այն մեղաց մէջ՝ որոնց այն ատեն
աւելի վտանգ կայ . ինչպէս են թերա-
հաւատութիւն և յուսահաստութիւն :

որպէս զի կարենամբ աղատիւ այս աշխարհիս թշուառութիւններէն և երթալ երկնաւոր հայրենիքը։ Եւ երբ հոգինիս ենէ մարմինէն՝ նոյն հրեշտակըն անոր ընկերանալով՝ կը միսիթարէ և կը զօրացընէ՝ որ վստահութեամբ երեւայ Աստուծոյ դատաստանարանին։ կը յիշեցընէ իրեն Յիսուսի անդին արդինքը, որոց վրայ պէտք է ապաւինիւ այն դատաստանին ատեն։ Եւ երբ աստուածային վճռով ասհմանուի քաւարանի պատժով մաքրել մնացած աղար, հօն ալ ստէպ կու գայ տեսնել զինքը, միսիթարել, և աւետիս տալ որ իրեն համար այս աշխարհիս մէջ օժանդակութիւն կ'ըլլայ, և ապահովցընելով զնա որ վերջապէս պիտի դրկուի։

Թ.

իսկ քու երրորդ և վերջին վեճակիդ վրայօք, մտածէ ինչ որ ամենէն եաքը ըրաւ հրեշտակն Ուափայել երբ տուաւ Տուքեայ պատանւոյն՝ կինը, և հարրա-

տացուց իր աներոջ ամեն ստացուածով շատ ու շատ պարզեւներով և հարստութեամբ դարձուց զնա իր հօրը տունը, ուր այնչափ աւելի ուրախութեամբ ընդունուեցաւ՝ որչափ որ մեծ եղած էր տրտմութիւնն իր ուշանալուն համար և կորուսելու վախին (Տովք. Զ, 10): Հիմայ մոտածէ նաև քու հաւատարիմ պահապանիդ պաշտօնը, որ՝ երբ հոգիդ մաքրուի ամէն բիծէ, և իր երկար և վտանգաւոր պանդըխուութեան վերջը հասած ըլլայ, բարի Հըրեշտակդ իրբեւ երկնաւոր փեսաւեր յետ կատարելու հարմնիօսութիւնը, չէ թէ Հուագուելի մի աղջկան հետ, այլ քու հոգւոյդ և երկնաւոր փեսային հետ, տեսակ տեսակ տուրբերով և աստուածային շնորհներով զարդարած պիտի տանի մացընէ զայն ուրախութեամբ՝ յերկինս, այն վերին Երուսաղէմը, որ է մայր մեր, և հօն մեծ հանդիսով և ինդութեամբ ամենայն Հըրեշտակաց և Որբոյ արքայութեան, որք այնչափ ատենէն ի վեր կը սպասէին, պիտի

Ներկայացընէ զնա երինաւոր Հօրը. որ-
պէս զի անոր աստուածային ձեռքէն
ընդունի զպակ փառաց և այն երանու-
թեան՝ որ պատրաստուած էր անոր ի
յաւիտենից, և որու համար մենք ա-
մէն թշուառքս ալ հիմայ այս արտա-
սուաց հովտիս մէջ փափագելով կը հա-
սաւէմք:

Ո՞չ, հազար հազար անդամ երջանիկ
հոգի, որ հաւատարիմ ըլլաւով իր Ա-
րարչին և հնազանդ իր Պահապան հրեշ-
տակին բարի խրատուց, յետ գովու-
թեան արժանի կերպով անցընելու իր
կենաց տարիները, նոյն այն հրեշտա-
կին ձեռքով պիտի մանէ այն երջանիկ
հայրենիքը, այն արդարոց յաւիտե-
նական տաղաւարները: Հօն պիտի կա-
տարուին ձշմարիտ հարսանիք Գառին
իր սիրելի հարսին հետ, հօն պիտի
ըլլայ լիուլի ուրախութիւն, կատա-
րեալ իսալաղութիւն և հանդիսատ ան-
վախճան (Յայտն. ԻԱ.):

Բայց դու, հոգի իմ, ի՞նչ ըրիր բոլոր
կենացդ մէջ, բայց եթէ յանցանք ըս-

տեղծողիդ դէմ, և զզուանք քու բարի
Պահապան հրեշտակիդ. ի՞նչ միսիթա-
րութեամբ հիմայ կը ընայ սա զքեզ
Հօրդ դիմաց համել. և դու ի՞նչ երե-
սավ կը ընաս իրեն երեւնալ: Ո՞չ, վայ,
Պատուած իմ, յուսահատիմ արդեօք:—
Փաւ լիցի, այլ գիտնալով որ անհամար
են քու ողորմութիւնքդ, և այն աւե-
տարանին յիշած բարի հօր անձամբ՝
այնքան գիթով ընդունեցար զզալացով
որդին (Կուկ. ԺԵ), կը յուսամ որ ե-
թէ ես ալ ցաւելով և զզալով դառ-
նամ քեզի, ով Հայր իմ, չես վունտեր
զիս, այլ իբրեւ գիթած հայր կ'ընդու-
նիս զիս. և թէ ոչ իբրեւ հնազանդ որ-
դի, գոնէ իբրեւ ապաշխարով որդի:

Հիմայ ուրեմն ի՞նչ փոխարէն կըր-
նանք տալ Աստուծոյ մեծվայելչու-
թեան, մեր իրմէ այնչափ պէսպէս
ընդունած բարեաց համար. (Սաղբ.
ՃՓԵ, 3). վասն զի պարտական եմք Ա-
րարչին՝ որ պատուիրեց իրեն Հրեշտա-
կաց որ պահպանեն զմեզ մեր ամեն
համբաներուն մէջ, նոյնպէս շատ պար-

տական եմք նոյն մեր Պահապան հրեշտակաց իրենց մեր վրայ ռւնեցած մեծ սկրյուն և ցուցած հաւատարիմ խնամոց համար։ Տես հիմայ, ինչ փոխարին կը դնաս ընել քու հաւատարիմ Նրեշտակիդ, և որ պարտք է որ ընես։ Նախ քու Նրեշտակիդ միշտ քովիդ գտտնուելուն համար՝ կը վայլէ պատիւ, յարդանք և ջերմեռանդութիւն, զգուշանալով չընելքան մի իր առջեւ՝ ինչ որ քեզմէ որ և է վերադոյն մարդու մի դիմաց չէիր ըներ. վասն զի վայ քեզի, եթէ այդ սուրբ Նրեշտակիդ նեղանալով քու անհոգութեանցդ և մեղացդ համար՝ զքեզ անարժան համարի իր ներկայութեան և Նրեշտակային այցելութեան։ Ասկէ զատ, կան շատ առաքինութիւնք որ հաճոյ են սուրբ Նրեշտակաց, և կը փափագին տեսնել մեր հոգւաց վրայ. մենք ալ պէտք է որ ամենայն ջանքով ունենամք։ Այսպիսիք են, Ճուճկալութիւն, Ողջախոսհութիւն, Կամաւոր աղքատութիւն, շատ հեղ Հառաշանկ՝ ջերմեռանդն արցուն-

քով և տաքուկ սրտանց աղօթքներով. բայց ամենէն աւելի՝ Միութիւն, Խաղաղութիւն և Եղբայրական Սէրն՝ որ է ամէն բանէ վեր, կ'ուզեն մեզմէ Նրեշտակին խաղաղութեան։

Ո՛վ հոգի իմ, ո՞լ գեղեցիկ պատկեր Ստեղծովիդ, եթէ հասկընայիր գուքու պատիւ, ո՞րչափ Աստուծմէ սիրուած և արժած ըլլալդ, և ո՞րչափ Նրեշտակներուն ալ յարդի ըլլալդ, անշուշտ զքեզ այնքան Պատուովին, դէմ այդպիսի նախատինք չընելու համար, և քու հաւատարիմ Պահապանիդ այդպիսի տժգոչութիւն չառլու համար, այդպէս դիւրաւ զքեզ մեղաց գարշութեամբ և տգեղութեամբ չէիր աղոնեղացներ և անպատուեր։ Ասմն զի եթէ երկնելը մեղաւորի մի գարձի համար այնքան ուրախութիւն կ'ըլլայ բոլոր Նրեշտակաց, (Մատ. ԺԸ, 14), ինչ տիսրութիւն և տհաճութիւն չես կարծեր որ զգաց քու բարի Նրեշտակը, երբ գու մեղքով մի ընկնիս Աստուծոյ չնորհքէն. ո՞հ, եթէ նա արիւն

ունենար թափելու և կեանք մի տալու
համար, ըքափ յօժարութեամբ՝ նման
քու Տիրոջդ կու տար, գքեղ փրկելու
համար։ Զանա ուրեմն զարդարելու
գքեղ այն առաքինութիւններով՝ որ
կ'ուրախայցնեն զըրեշտակս և փառք
կու տան Աստուծոյ. որպէս զի այս
սերմերէն, այս անգին արդինքներէն,
զըրեշտակային առաքինութեանց նման
դու ալ կարենաս ամենանուշակ պտուղ-
ներ քաղել, նմաննոյն իսկ Հըրեշտակաց
արդիւնաշահ պսակին։



Խ ՍԱԿՑՈՒԹԻՒՆ



Այսօէ զԾէր մեր Աստուծած, որ
ինչպէս ինքն զարմանալի կարգաւ-
րաժնեց իր Հըրեշտակաց զանազան գոր-
ծեր և պաշտօններ՝ մարդկանց օգախն
համար, այսպէս ալ հաճի շնորհէլ քեզի
որ այն ամեն երանեալ հոգիք՝ որք միշտ
Աստուծածային մեծվայելչութեան գի-
մաց կը կենան և կը ծառայէն, քու
կեանքդ ալ միշտ պահպանէն և պաշտ-
պանէն քու անգութ թշնամիներէդ. և
ինչպէս որ իրենց այնշափ առատ շնորհք
պարգեւեց, այսպէս ալ հաճի անոնց
խնդիրքով տալ քեզի շնորհք նմանելու
անոնց խոնսարհութեան, սիրոյն և մա-
քրութեան. որպէս զի երկրիս վրայ հը-
րեշտակային կեանք մ'անցընելով՝ ար-
ժանի ըլլաս հօն վերն ալ նմանիլ այն
Հըրեշտակաց, և անոնց հետ վայլել Աս-
տուծոյ փափագէլի և երանելի տեսու-
թիւնը։

Տէրն մեր ըստու, որ եթէ ըլլամբը
 տղոց պէս՝ չեմք կը ընար մանել յար-
 քայութիւն. վասն զի, ինչպէս ուրիշ
 անդամ մաս ըստու, ասոնց նմաննե-
 րուն համար է արքայութիւնն. ուրե-
 մըն եթէ կ'ուզեմք փրկութիւն պէտք է
 որ ունենամք այն յատկութիւնները՝
 զոր ունին տղայք, այսինքն այնպէս
 ըլլայ մեր բարբն ու վարդն ինչպէս է
 անոնց այն հասակին մէջ: Տղայք պար-
 զամիտ են, չարութիւն չունին, խա-
 բէութիւն չունին. մաքուր են մտօք և
 մարմնով, պատիւ, վաս կամ անար-
 դանք չեն խարեր. ուրիշի վիաս չեն ը-
 ներ. եթէ ուրիշէ վիասութիւն՝ վրէժ չեն
 ինդրեր. ուրիշներու հետ չեն վիճեր,
 այլ ամենուն կը հաւանին. վերջապէս
 վախկոտ են և դիւրաւ կը հնազանդին
 իրենցմէ մեծերու: Ասոնք քրիստոնէա-
 կան առաքինութիւններ են, զորոնք
 ինքն իսկ Քրիստոս կատարեց, և յոր-
 դորեց զմեղ անոցմով նմանելու իրեն,
 երբոր ըստու. ինձմէ սովորեցէք, որ հեղ
 եմ և խոնարհ սրտով. այս երկու ա-

ռաքինութեանց մէջ բոլոր մերլյիշ-
 ւած յատկութիւններ կը բովանդակին:
 2. Դարձեալ կ'ըսէ Տէրն մեր. Ուսոր
 տղու մի պէս կը խոնարհի նա արքա-
 յութեան մէջ մեծ պիտի ըլլայ: Ո՛չ,
 ինչպէս աղէկ ըստ Առաքեալն, թէ
 Մարմնաւոր իմաստութիւնն թշնամի և
 հակառակ է Աստուծոյ իմաստութեան.
 վասն զի աշխարհիս մէջ անոնք կը հա-
 մարտուին մեծ՝ որոնք որ լւա գիտեն
 պատույ կէտերև և աստիճանները պա-
 հել. իսկ Աստուծած զասոնք բանի տեղ
 չի գներ. ընդ հակառակն, որոնք որ կը
 ջանան աւելի յածնալ և զիրենք ուրիշ-
 ներու ոտից տակ գնել, ճշմարտապէս
 անոնք են մեծ Աստուծոյ առջեւ, և
 աւելի մեծ պիտի ըլլան քան զուրիշնե-
 րը՝ արքայութեան մէջ, Իմաստոնցն ը-
 սածին յարմար. Որչափ որ մեծ ըլլաս,
 խոնարհցու զքեզ ամեն բանի մէջ.
 որով Աստուծու շնորհք կը գանես:

3. Որչափ որ մարդ զինքը պղտիկը-
 նէ քան զուրիշները՝ այնչափ ալ մեծ
 կ'ըլլայ. վասն զի որչափ որ մէկն աւելի

խոնարհ ըլլայ՝ այնչափ աւելի մօտ և
նման կ'ըլլայ Յիսուսի, որ է ի վեր քան
զամենայն։ Արդ, եթէ այս այսպէս է,
չի վայեր քրիստոնէլց և հոգեւոր
անձանց՝ մէկ մէկու հետ վիճել, յա-
ռաջ անցնելու կամ առաջին տեղը բրո-
նելու համար, հապա մանաւանդ թէ՝
յետինը, վասն զի ով որ կ'ուղէ երկրիս
վրայ առաջին տեղը՝ երկնից մէջ ամօթ
պիտի կրէ։ Ուրեմն հոգ ընկենք մեծ
երեւնալու քան զուրիշները, հապա
քան զամէնքը սաորին ըլլալու։ Վասն
զի ոչ եթէ ամենէն աւելի պատուածն՝
ամենէն արդար և լաւն է, հապա ընդ
հակառակն, ով որ աւելի արդար է
աւելի մեծ է և պատույց արժանի։

4. Եթէ այնչափ պէտք է մեզի յար-
գել Պահապան հրեշտակները, ինչպէս
որ կը հրամայէ Տէրն, պէտք է չանամք
չարհամորհէլ և ոչ ամենէն յետին ու
փոքր մարդ մի։ Այսպէս Առաքեան
ալ կը խրատէր կանանց, որ իրենց քիչ
շատ անհամեստութեամբ և ունայնա-
սիրութեամբ մարդկանց վրկութեան

ջանացող Հրեշտակները չտհամեցը-
նելու համար՝ եկեղեցւոյ մէջ բաց-
գլուխ չկենան։ Ո՞րչափ ուրեմն աւելի
պէտք է զգուշանալ աւելի մեծ վնաս
կամ անիրաւութիւն ընելէն մեր ըն-
կերաց։ Վասն զի վանոնք վնասել կամ
գայթակղեցընելն՝ զՀրեշտակս արհա-
մարհէլ է, որք Աստուծոյ բարեկամք
և մտերինք ըլլալով՝ կըրնան մեզի դէմ
վրէժ ինդուել և առնուց։

5. Ինչպէս Հրեշտակք այնքան մեծ
ջանք և խնամք կը բանեցընեն զմար-
դիկ պահպանելու համար, սակայն մըս-
քով ամենեւին չեն դադրիր տեսնել և
նկատել երկնաւոր Հօր երեսը, և ոչ
երբէք կը հեռանան ի սիրոյն Աստու-
ծոյ, որովհետեւ մեր վրայ ունեցած
ջանքերնին և խնամքն՝ այն սիրոյն ե-
տեւէն կու գայ, և անոր համար ալ է
ըրածնին. այսպէս ալ պէտք է որ հո-
գեւոր անձինք՝ որ արտաքին հոգեր և
զբաղանք ունին, այնպէս գործէն՝ որ
ոչ միայն ներքին գործերը չարդելէն,
այլ նաև օգնեն անոնց հոգեւոր օգ-

տին և աստուածային բաներու նկատ-
մանց : Այս բանս կը յաջողի՝ երբ սըր-
բոց Նորէշտակացնման ջանան՝ որ իրենց
արտաքին գործերն առաջ դան և ուժ-
անուն ներքիններէն , և ասոնցմոլ
կարգի կանոնի դան . այսինքն ոչ ու-
րիւ դիտմամբ գործեն՝ այլ միայն պար-
զապէս Աստուծոյ սիրոյն համար :

6. Որոնք որ հոգաբարձու են զհո-
գիս ապաշխարութեան բերելու, պէտք
է դիտնան որ ոչ երբէք ետ կենալու է
գործէն՝ քաշած նեղութիւններնուն
կամ գժարութեանց համար , և ոչ ալ
տարակուսելով թէ արդեօք պիտի յա-
ջողի՝ իրենց տուած հոգեւոր օգնու-
թիւնը . ինչպէս որ Պահապան հրեշ-
տակը իրենց օրինակով մեզի կը սովորե-
ցընեն . որոնք ոչ երբէք կը թողուն
մեղաւորի մի վրայ տարած հոգերնին
կամ պահպանութիւնը , թէպէտ և
շատ տհաճութիւններ աւ կրեն անոնց
մեղաց համար . և ինչուան՝ նա և եթէ
Աստուծոյ յայտնութեամբն իմանան՝
որ իրենց հոգացածները պիտի չդառ-

նան (ծուռ Ճամբէն) , ոչ երբէք կը դա-
դրին դրդելու զանոնք յապաշխարու-
թիւն , քանի որ այս կենաց մէջ են , և ի
վիճակի ապաշխարել կրնալու և դառ-
նալու առ Աստուծոծ :

7. Հեթանոս փիլիսոփայն Սենեկա
իր մէկ քարեկամին գրելով , կը խրատէ
որ իր գործերու ու խօսքերու մէջ չա-
փէն դուրս չելնելու համար՝ երեւակա-
յէ որ Կատոն դիմացը կեցեր է՝ իբրեւ
իմաս դատաւոր մի : Այս խրատս աւե-
լի շատ իբաւանիք մեզի քրիստոնէիցա
կը վայէլ , որ մեր ամեն գործոց մէջ ե-
րեւակայենք Պահապան հրեշտակիները
քովերնիս կեցած , իբրեւ անաշտո-
քննողք . որպէս զի այս երեւակայու-
թիւնն օգնէ մեզի զգաստ կենալու , և
զգուշանալու մեր ամեն գործոց և խօ-
սից մէջ . վասն զի եթէ այսպէս ըննեմք՝
վախնալու է , որ ըլլայ (թէ անոնք որ
հիմայ մեզի բարեխօս են առ Աստուծոծ ,
վերջը դատաստանին օրը մեզի դատա-
խաղ (ամբաստանող) ըլլան :

Ա.ԻԵՏԱ.ՐԱ.Ն*

Մատեան աշակերտքն առ Յիսուս,
և ասեն. Ո՞վ իցէ ի մէնջ մեծ յար-
քայութեան երկնից: Եւ կոչեաց Յի-
սուս առ ինքն մանուկ մի. կացոյց
զնա ի մէջ նոցա, և ասէ. Ամէն ա-
սեմ ձեզ, եթէ ոչ դարձիք և լինի-
ջք իբրեւ զմանկտի, ոչ մոանիցէք
յարքայութիւն երկնից: Արդ, որ
խոնարհեցուցանէ զանձն իբրեւ ըզ-
մանուկս զայս նա է մեծ յարքայու-
թեան երկնից: Եւ որ ոք ընկալցի
մանուկ մի այսպիսի՝ յանուն իմ, զիս
ընդունի:... Զգոյշ լերուք, մի ար-
համարհիցէք զմի ի փոքրկանցս յայս-
ցանէ. ասեմ ձեզ, զի հրեշտակը նոցա
յերկինս՝ հանապազ տեսանեն զե-
րեսս Հօր իմոյ որ յերկինս է:—
(Մատթ. ԺԸ):

* Տես երես 48:

ՄԱ.ՐԳԱ.ՐԵՍՈՒԹԻՒՆՔ

Ո՞վ է որպէս Տէր Աստուած մեր՝
ի բարձունս բնակեալ, և զիսոնարհս
տեսանէ յերկինս և յերկրի: (Աաղմ-
ձմբ, 5):


Տէր առնէ զիսոնարհս ի բարձունս:
(Յովի. Ե, 14):

Տեսանէի, մինչեւ աթոռք անկա-
նէն, և Հինաւուրցն նստէր. հան-
գերձ նորա սպիտակ իբրեւ զձիւն, և
հեր գլխոյ նորա իբրեւ զարդ սուրբ:
Հաղարք հազարաց պաշտէին գնա,
և բիւրք բիւրուց կային առաջի նորա:
(Դան. Ե, 9. 10):

Հրեշտակաց իւրոց պատուիրեալ է
վասն քո, պահել զքեզ յամենայն ճա-
նապարհս քո: (Աաղմ. Ղ, 14):

Բանակ հրեշտակաց Տեառն շուրջ
է զերկիւղածովք իւրովք, և պահէ
զնոսա: (Սաղմ. ԼԳ, 8):

Մի ասեր առաջի (Հրեշտակաց)
Աստուծոյ, թէ անգիտութեամբ է.
զի մի բարկասցի Աստուած ի բար-
բառ քո, և ապականեսցէ զգործս
ձեռաց քոց: (Ժողովոլ, Ե, 5):



Հ Ա Ա Ր Ք

Խ Ո Ւ Ա Ր Հ Ո Ւ Թ Ե Ա Ն



Առաջին հնարքն է հասկընալն, որ,
թէպէտ եւ այս առաքինութիւնս
գլխաւորապէս կը պատշաճի մարդկան՝
իրենց նուաստութեան համար, սա-
կայն «Ոչ բուսանի յերկրի մերում»^{*} «
այլ պէտք է խնդրել զայն յերկնից, «ի
նմանէ՝ յորմէ ամենայն տուրք բարեք
և ամենայն պարգեւք կատարեալը»:
Որդ, թէպէտ և հպարտ չըլլաս, ջանա-
կըրցածիդ չափ, ամենամեծ խոնար-
հութեամբ ընդունելու նոյն այդ Խո-
նարհութեան առաքինութիւնը՝ յան-
բաւ մեծվայելչութենէն Աստուծոյ,
իբրեւ անոր առաջին և գլխաւոր Հե-
ղինակէն. և զայս՝ միջնորդութեամբ և
արդեամբ խորին Խոնարհութեան Յի-

* Կ'ակնարկէ ի Սաղմոսն ԶԴ, 12:

սուսի. որ՝ « Ալնչ ի կերպարանս ծաւ
առայի էր, ունայնացոյց զանձն, զիեր-
» պարանս ծառայի առևտալ » :

Երկրորդ հնարք. դիմէ ի բարեխօ-
սութիւն այն Սրբոց՝ որք յառկապէս
նշանաւոր եղան այս առաքինութեամբ :
Նախ. մտածելով որ ինչպէս իրենք
հօս երկրիս վրայ արժանի եղան այնքան
առատապէս ընդունելու այս առաքի-
նութիւնս, այսպէս ալ հն յերկինս՝
ուր աւելի հաճոյ են Աստուծոյ՝ քան
որչափ էին երկրիս վրայ, այնչափ ա-
ւելի յատուկ կերպով պիտի ըլլան
արժանաւորք և արդիւնաւորք. և ո-
րովէնետեւ ալ հիմայ կարօտութիւն
չունին իրենք իրենց համար խոնար-
հելու, որովէնետեւ այս ձանապար-
հաւ վերացն ի բարձրութիւն երկ-
նից, ինդը իրենցմէ որ հիմայ քեզի
համար ընդունին զայն յԱստուծոյ :

Դարձեալ. մտածէ որ ինչպէս հօս
երկրիս վրայ ամէն մարդ բնականօրէն
կը ջանայ որ յառաջ տանի (կամ զար-
գացընէ) զանոնք, որ կը փափագին այն

արուեստին՝ որոյ մէջնա նշանաւոր ե-
ղած է, (ինչպէս օրինակի համար, մեծ
զօրապէտ մի թագաւորի՝ արքունեաց
մէջ կը ջանայ անոր քով մասնաւորա-
պէս յառաջ անցընելու զինուորու-
թեան կարգաց մէջ զանոնք՝ որ կը փա-
փագին այն բանին . մեծ գիտնական մի
կը ջանայ յառաջ տանելու զանոնք՝ որ
(գիտութեանց) և դպրութեանց ետե-
ւէ են . կամ մեծ ձարտարապէտ մի
կամ չափագէտ (մաթեմատիկոս) մի զա-
նոնք՝ որք կը փափագին և կ'աշխատին
հմուտ ըլլալու ձարտարապէտութեան
և չափագիտութեան մէջ), այսպէս ալ
յերկինս՝ անոնք որ նշանաւոր եղած
են աւելի մէկ առաքինութեան մէջ
քան ուրիշ առաքինութեանց, մասնա-
ւորապէս յառաջ կը քաշեն և կ'օգնեն
նոյն առաքինութիւնը վաստըկելու՝ ա-
նոնց որ աւելի ջանք ունին զայն ըն-
դունելու, և ասոր համար իրենց բա-
րեխօսութեանը կ'ապաւինին : — Արդ
ասոր համար՝ յիշէ մասնաւորապէս
գիմել առ ամենասուրբ Կոյս Տիրամայ-

ըլն, իբրեւ առ ամէն այս առաքինու-
թեանց մէջ գերազանցեալ մաքուր ա-
րարածներէն՝ աւելի նշանաւոր եղածն։
Յետոյ Առաքելոց մէջ դիմէ առ Ա.
Պետրոս, որ իրէն համար կ'ըսէր, « ի-
» բաց գնա յինէն, Տէր, զի այր մեղա-
» ւոր Եմ»։ և առ Ա. Պօղոս, որ թէ-
պէտ մինչեւ յերրորդ Երկինս յափշշ-
տակուեր էր, այնչափ ցած համարմունք
ունէր իր վրայ՝ որ կ'ըսէր։ « Եկն Յե-
» սուս փրկել զմեղաւորս, որոց գլու-
» խըն ես Եմ»։

Այս մոածութեանց առաջինն՝ քե-
զի պիտի ծառայէ հասկընալու, թէ
այս Սուրբերս որչափ կարող են Աս-
տուծոյ առջեւ՝ այս առաքինութիւնս
քեզի ընդունելու համար։ Երկրորդ,
թէ որչափ՝ չէ թէ միայն կըրնան, այլ
և յօժար և պատրաստ են ընելու։



70 R.

1944



«Ազգային գրադարան



NL0028698

1883